

հետ դատուիլ թիֆլիզի դատարանին մէջ և իմ գրածներս ապացուցանել: Եթէ այսչափ վատահէ իւր գրածներուն վերայ՝ ինչո՞ւ սոյն յայտարարութիւնն Եւթիմանի կամ թիֆլիզի մէջ չըրաւ, քանի որ ինքն այն տեղ կը գրանուէր . . . :

Պ. Հովուեան, ընդհանուր Հայրապետի գործոց վերայ խօսած ժամանակ, այնպիսի մասնաւորութեանց, այնպիսի անձնական տգեղ և անհաւատալի նկարագրութեանց կ'իջանէ, որով տարակուսանաց կ'ենթարկէ նոյն իսկ իւր ընդհանուր նկատմամբ գրածներն: Ուստի առաւել քան զայս խօսիլ արժան չ'եմք համարիր այս տեղ գեղ նիւթին վերայ:

Ն Ա Մ Ա Կ

... Խմբագիր Սիօն ազգագր. Ամսագրի:

Մի տարիէն աւելի է, որ 60 տարեկան աղքատ Եւթիմիայի մը կը գրուի յԱրուստագէմ. սա՛ այս մէկ տարուան միջոցին մէջ այլոց սպասաւորութիւն ընելով օրական հացը կը գտնէր, թէեւ իւր վարմունքէն եւ գործին ժամանակ գործածած ձեւերէն կ'երեւէր ցնորած ըլլալ: Սոյն աղքատն մէկ ամիս առաջ 4 կանգուն երկայնութեամբ եւ բաւական հաստութեամբ փայտէ խաչ մը ուսը առած փողոցները շրջիլ սկսաւ. ան ցորգք երբ իրեն կը հարցնէին՝ թէ ինչո՞ւ համար խաչն ուսը առած է. կը պատասխանէր՝ թէ ինքն փափաքած է իբր աշակերտ Քրիստոսի նորա պատուիրանին հետեւիլ, որ ըսած է. «Եթէ որ կամիցի զինի իմ գալ՝ ուրաացի զանձն, և առցէ զխաչ իւր և եկեսցէ զինի իմ»:

Ես խղճուեց Եւթիմիային անգղիւ արէն լեզուաւ առաքելական թուղթ մը կը գրէ տեղւոյս Կառավարչին, որով աշխատած է Քրիստոնէութիւն հրաւիրել զՍահմէտականս Կառավարչին միջնորդութեամբ, ըսելով թէ՝ ինքն աստուածակոյս կողմանէ խրկուած Եւթիմիայ մը ըլլալով՝ ազգարարութիւն կրնէ Սահմէտականաց Քրիստոնէութիւնը ընդունիլ, ապա թէ ոչ դառն պատիժներ ունին կրելիք և արդէն ժամանակը մօտեցած է: Կառավարիչը քովը կանչել տալով կը հարցնէ իրեն թէ՝ ի՞նչ աղքատմբ այս տեսակ գիր մը գրած է. նա ալ կը պատասխանէ թէ. «Երբ ասիէ 5 տարի առաջ նաւաստիութեան պաշտօն կը վարէի Ենդլիոյ նաւատորմիցի մէջ, որ մը սաստիկ ալեկոծութեան հանդիպած էինք, մէկ կողմէն անձրեւը անդադար կը տեղար, միւս կողմէն որդտումները մինչեւ ծովուն յատակը կը խօսէին եւ փայլակները աշխարհս կը լուսաւորէին, նոյն միջոցին որ ապշած երկինք կը նայէի, յանկարծ տեսայ զՔրիստոս իր աթոռոյն վրայ նստած, սա՛ առ խուզղելով հայեցուածքը՝ ըսաւ. պէտք է որ այժմեան պաշտօնդ թողուս և երթաս Եւթիմիայնս քարոզելու Սահմէտականաց, ըսէ իրենց որ եթէ չզգաստանան, դարձեալ իրենց հաւատքին հետեւին, թող գիտնան որ սաստիկ կերպիւ պիտի պատժուին: Ես անցապաղ սոյն հրամանին նման թողուցի պաշտօնս եւ ահա կը տեսնեմ որ ժամանակը հասեր է, պէտք է որ առաքելական պաշտօնս կատարեմ, յայտնելով միանգամայն, որ կորսնցնելու ժամանակ չմնաց. ժամ առաջ յուզղութիւն դարձէք. ահա իմ պարտքս կատարեցի, այսուհետեւ ես անպարտ եմ. բայց սիրտս շատ կը ցաւի որ ինձ չի պիտի

լսէք, որով և (Լստուածոյ բարկութիւնը պիտի շարժի ձեր վրայ և այս պատճառաւ արդէն մեծ սուգի մէջ կը գտնուիմք) : (Ի նշան սգաւորութեան ձախ թեւի մը) : (Լսոնք ըսելով դուրս կ'ելնէ դառն ցաւ և տրտմութիւն յայտնելով ու արտասուելով) :

Կառավարութիւնը տեսնելով, որ խեղճ և ապուշ մարդ մ'է, երբէք կարեւորութիւն չը տուաւ ըսածին :

Յիշեալ նոր առաքեալը դեռ կը շարունակէ իր պաշտօնը, այսինքն խաչը ուսը առած փողոցները կը շրջի, ի իրեն հետեւորդ ունենալով շատ մը պարապորդ մանուկներ, որոնք կը ծաղրեն զինքն և կ'այսպէսնեն :

Խմբագիր, կը խնդրեմ ներկայս հըրտարարակել ՚ի տեղեկութիւն ազգայնոց :

1875 Նոյ. 20.

Յարութիւն թ.

Երոստէմ.

Կալեագիտաց :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿՐԹԱՐԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

ԳԱՍԵ.

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐԹԱԿԱՆ

Գեղեցիկ ոճով և պարզ մեկնութեամբ բացատրուած է սոյն Տեղ.

(1) Յիշեալ Ամերիկացին, քանի մի շաբաթ առաջ, մի ընդարձակ անդրադարձն էր արեւմտեան մեր պատրիարքարանի ուղարկուած էր Ս. Պատրիարքին տալու : Տեղական սեռա ժապաւեն կը կրէր և սեռա կնքամանով կնքուած էր : Պարունակութիւնն էր մի փոքրիկ յառաջարան, (որով աշխատութիւն կը խնդրէր մեր Ս. Պատրիարքին իւր աւետարանական քարոզութեան համար) և Ս. Գրքին քաղուած շատ վկայութիւններ, բոլորովին առանց կապակցութեան դասաւորուած : որով անհնարին էր իմանալ թէ ի՞նչ կ'ուզէ հասկացնել և ի՞նչ է իւր նպատակն :

Ե. Ե.

րակին մէջ կրօնական անտարբերութեան տեսակներն և վնասներն, լուսաբանուած է պարզապէս՝ թէ ի՞նչ քան թշուառ է մի ժողովուրդ, մի ազգ, մի հասարակութիւն, երբ կը բռնական անտարբերութիւնն տիրած է իւր անդամոց մէջ և ընդհակառակն՝ թէ ի՞նչ քան երջանիկ է մի ժողովուրդ, երբ Քրիստոնէական Կրօնն հիմն բռնած է իւր երկրաւոր և երկնաւոր ճիւղ մարիտ երջանկութեան :

Գլխ. Դ. և Կ. Գաւիթի :

ՍԻՐՈՒՆ ԶԲՕՍԵՐԸՆ

Հետաքրքրաշարժ փոքրիկ Գրքոյի, 88 երեսէ բաղկացեալ, Թարգմանութիւն Գրիգոր Վարդապետի Կ. Պօլսեցւոյ, որ կը պարունակէ իւր մէջ Տաան հիւթաւոր Գոյտկաց կամ Բ' պեղեաց դիմառնական բանախօսութիւններն, բարոյական մարդիկ և հըրահանգիչ եղանակաւ : Այն բանախօսութեանց կամ ատենախօսութեանց մէջ իւրաքանչիւր Գոյակ կը ջանայ զինքն ջատագովել. իսկ ընդհակառակն՝ իւր դիմախօսն կը ճգնի նորա վնասակար յատկութիւններն յերեւան հանել, որով մին զմիւսն յաղթահարելով կը նշաւակեն զմիմեանս և կը պարզեն, որ վնասակար է մարդոյ՝ չարաչար գործածութիւն ոգեւելից և գրգռիչ Բ' մպեղեաց :

Գլխ. 2 Գաւիթի :

Կը վաճառուին ՚ի գրատան Ս. Լ. Թոռոյս և ՚ի Փոխանորդարանի Կ. Պօլսոյ :